

8303

Dunking  
Highway bridge  
Kings Lynn

281.6  
R - 95

04 NOV 2009

ԱՌԻՍՈՎԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

(1917 թ. յունիս)

ԲԱՆԱԳԵՒԵՐ



Ա. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Եկեղեցական Տպարան Մայր Արքունի

1917

281.6  
Բ-95

1906

24 JUL 2013

8303

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Բ  
Տ Տ Ե Ռ Ո Ր Գ Ա Յ Ե .  
Վ Ե Հ Ա Փ Ա Յ Ե Ւ Ս Ի Պ Ա Յ Ե Յ Ա Յ Ե Ւ Ս Ի Պ Ա Յ Ե Յ  
Ա մ ե ն ա յ ե գ ա յ ո ց



(10497-57)  
13047-57

10497  
4037

4037

4037

## ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

Բացուած 1917 թ. յունիսի 12-ին, առաւտօնեան 10 ժամին.  
Եերկայ էին.—29 կուսակցոն եւ 38 աշխարհիկ նոզեւո-  
րական, ընդամենն 67 նոզի:

Համագումարի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ  
տէրունական աղօթքով, «Էջմիածին ի Հօրէ» շարականով,  
Համագումարին ուղղուած Հայրապետական ս. Կոնդակի  
ընթերցմամբ և Տեղակալ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի ող-  
ջոյնի խօսքով, որին ի պատասխան՝ քահանայական դասի  
կողմից ողջոյնի խօսք ասաց հ. Եղիշէ ա. քհ. Գեղամեանը՝  
ինգրելով յայտնել նորին Վեհափառութեանը ժողովական-  
ների որդիական երախտագիտական զգացմունքը:

Տ. Մեսրոպ Եպիսկոպոսը խօսեց Համագումարի ծանր  
պարտականութիւնների մասին. հ. Ռուբէն ա. քհ. Բէկ-  
գիւեանը ողջունեց Համագումարը Կովկասեան զօրարա-  
նակի հայ զինուորների կողմից:

Այսուհետեւ Համագումարն անցաւ նախագահական  
կազմի ընտրութեանը. Սոյն նիստի ժամանակաւոր ղեկա-  
վար Տ. Տեղակալը, որպէս նորին Վեհափառութեան ներ-  
կայացուցիչ, միաձայն ընտրուեցաւ պատուաւոր նախա-  
գահ: Ապա որոշուեցաւ, որ նախագահական կազմի մէջ  
ընտրուին մի եպիսկոպոս և երկու քահանայ՝ իրեն տաե-  
նապետ և վեց քարտուղար: Թերթիկներով առաջարկուե-  
ցան ատենապետական համար թեկնածուներ 6. վերջին-  
ներից Տ. Մեսրոպ և Տ. Խորէն Եպիսկոպոսները՝ հրա-  
ժարուեցան քուէարկուելով՝ պատճառաբանելով, որ նոքա  
Հայրապետական Դիւանի առաջարկած հարցերի մշակումով  
չեն զբաղուել, այն ինչ Տ. Գեորգ Եպիսկոպոսը նախագահ  
ինելով միաբանական ժողովներին, ուր քննուած են այդ

հարցերը, լաւ ծանօթ է նրանց։ Իսկ Եղիշէ ա. քհ. Գեղամեանը հրաժարուել է, որպէս զի հնարաւորութիւն ունենայ ժողովի ընթացքին հետեւելու և վիճաբանութիւններին մասնակցելու։

Ապա կատարուեցաւ դարձեալ թերթիկներով ընտրութիւն, որի արդինքը հետեւեան եղաւ։

Տ. Գէորգ եպիսկոպոս  
Տ. Մեսրոպ ա. քհ. Մելեան  
Տ. Ռուբէն ա. քհ. Բէկովիլեան

ատենապետներ

Ապա բաց քուէարկութեամբ քարտուղար ընտրուեցան՝ Արտակ վարդապետ, Առոն վարդապետ, Յովհաննէս ա. քհ. Չուբարեան, Գրիգոր քհ. Նորարեան, Անդրանիկ քհ. Դաւթեան, Յարութիւն քհ. Տէր-Ենօրեան։

Օրակարգ կազմելու խնդիրը նախադահական կազմին յանձնուեցաւ, որից յետոյ առաջին նիստը փակուած յայտարարուեցաւ։

## ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

Բացուած յունիս 13-ին, առաւօտեան ժամը 10-ին, ներկայութեամբ 51 հոգու, ատենապետութեամբ Տ. Գէորգ եպիսկոպոսի։

Պրեզիդիումի կազմած օրակարգը վաւերացնելուց յետոյ՝ Համագումարը նախ որոշեց ունենալ հետեւեալ սեկցիաները։

1) Եկեղեցու և Եկեղեցականութեան բարեկարգութեան խնդիրներ. 2) Տնտեսական խնդիրներ. 3) Դպրոցական-կալուածական խնդիրներ. 4) Վարչական խնդիրներ. 5) Ռուսահայ Եկեղեցական կեանքի այժմէական հրատապ խնդիրներ։

Ծնորհաւորական հեռազերի ընթերցումից յետոյ՝ կազմուեցաւ վերաստուգիչ մասնաժողով՝ պատղամաւոր-ների լիազօրութիւնները քննելու համար, յանձնին Տ. Վահան Եպիսկոպոսի, Տ. Եղիշէ ա. քհ. Գեղամեանի և Տ. Յակոբ քհ. Խաչվանքեանի։

Այսուհետև որոշուեցաւ, 1) որ նիստերին ներկայ լինել ցանկացող կողմանակի անձինք իւրաքանչիւր անգամ ստանան՝ պրեզիդիումի թոյլառութիւնը. 2) որ մամուլի ներկայացուցիչներին թոյլ տրուի ներկայ լինել նիստերին՝ այն պայմանով միայն, որ նոքա հրատարակեն միայն ընդհանուր ժողոմների բանաձևերը։

Զայնատուութեան եղանակի մասին որոշում եղաւ, որ ամեն մի առանձին խնդրի կամ բանաձեկի քուէարկութիւնից յետոյ՝ նշանակուի ստացած ձայների թիւը՝ ինչքան էլ որ լինի կիսից աւելի կամ պակաս։

Ապա առաջարկ եղաւ որոշելու Համագումարի վճիռների իրաւական նշանակութիւնը (պարտադիր, խորհրդակցական և այլն). այս առաջարկի քննութիւնը մնաց յաջորդ Փ. նիստին։

## ՆԻՍ ԵՐԵՐԾՈՒՅԹ

Բացուած յունիսի 13-ին, երեկոյեան ժամը 8-ին, ներկայութեան 66 ժողովականների, ատենապետութեամբ Տ. Ռ. ա. քհ. Բէկովիլեանի։

Քննութեան էր դրուած Համագումարի որոշումների իրաւական նշանակութեան խնդիրը, որ շատ թեր և դէմ կարծիքների ու վիճաբանութիւնների առիթ եղաւ. այս առթիւ առաջ եկաւ 2 զվարար հոսանք. ըստ առաջնի՝ Համագումարի որոշումները խորհրդակցական նկատել. ըստ երկրորդի՝ նկատել որոշումները պարտադիր։ Այս 2 զվարար հոսանքների մէջ նկատելի էր զանազան շերտաւորումներ.՝

Այսպէս՝ եթէ ժողովը խորհրդակցական է, ապա ուժ պիտի ներկայացուին նրա որոշումները իհայեցողութիւն.՝ Վեհ. Հայրապետին, թէ ազգ.-եկ. ժողովին. և կամ եթէ ժողովը օրէնսդրական է՝ այսինքն պարտադիր որոշումներով, ապա ամբողջովին պարտադիր, թէ մի մասով միայն՝ ի նկատի առնելով թէ որ խնդիրը որ չափով հրատապ այժմէականութիւն ունի։

Քանի որ Համագումարը հրաւիրող կոնդակը «Նախապատրաստական» անունն է տալիս նրան,—այստեղից, ինչպէս նաև ուրիշ մի շարք խնդիրներից (լոկ հոգեոր գան և այն էլ միմիայն ոռւսահայ բաժնի, ընտրութեան թերի հգանակով և այլն) հետեւում է, որ «պարտադիր», «օրէնսդրական» համարելու առաջարկ անողները չնախատեսուած ճանապարհ են ցոյց տալիս:

Այս առթիւ հետևեալ բանաձեռը քուէարկուեցան.— «Այս ժողովը լոկ խորհրդակցական ժողով չպէտք է համարել, այլ որոշումներ կայացնող և իր բոլոր որոշումները յանձնելու ի պահ Հայրապետական Դիւանին յետապայում կայանալիք համազգային ժողովի սեղանի վրայ դնելու վեհ. Հայրապետի միջոցով, համազգային ժողով, որ լինելու է համայն հայութեան կողմից ընտրուած իրաւասու մարմին»: Այս բանաձեռը ստացաւ և ոչ մի ձայն:

«Առնելով ի նկատի՝ ա. Վեհ. Կոնդակը, ը. ներկայ եղող պատգամաւորների ընտրութեան թերի լինելը և գ. աշխարհական տարրի բացակայութիւնը՝ ես գտնում եմ, որ ներկայ ժողովը ոչ երբէք կարող է պարտադիր որոշումներ կայացնել, այլ միմիայն նախապատրաստական կամ խորհրդակցական ժողով լինի՝ սոսկ մշակուած նիւթեր տալու առաջիկայում կայանալիք ազգային եկեղեցական ընդհանուր ժողովին»: Այս բանաձեռը քուէարկութեամբ ստացաւ 20 ձայն:

«Կուսակրօն և աշխարհիկ հոգեորականութեան նախապատրաստական համագումարում կայացնել որոշումներ և այդպիսիք ներկայացնել ապագայում գումարուելիք Ռուսահայ-ազգային և ընդհանուր-ազգային եկեղեցական ժողովներին սոյն համագումարի կողմից ընտրուած ներկայացուցիչների միջոցով»: Այս բանաձեռը ստացաւ 7 ձայն:

«Ի նկատի առնելով առաջին, որ ներկայ հոգեորական ժողովի կազմը պակասաւոր է, երկրորդ, որ ներկայացուցիչների մեծ մասը նշանակուած է և ոչ ընտրուած, գոնէ հոգեոր դասից, երրորդը, որ այն եկեղեցին (ժողովուրդը),

որի հոգեոր կեանքը բարելաւելու համար հրաւիրուած է ներկայ հոգեոր ժողովը ոչ մի մասնակցութիւն, նոյն իսկ շատ տեղերում տեղեկութիւն չունեն թէ համագումարի և թէ նրա առաջ դրուած խնդիրների մասին: Հոգեորական համաժողովը համարում է իրենց միմիայն խորհրդակցական-նախապատրաստական, սակայն որոշումներ տալու լիազօր և այդ որոշումներից ոչ հիմնականները իրագործելի, անցնում է հերթական պարապմունքներին»: Այս բանաձեռը ստացաւ 16 ձայն:

«Ժողովը նախապատրաստական է: Այս ժողովի բոլոր վճիռները անփոփոխ պէտք է ներկայացնել ազգային ընդհանուր ժողովի քննութեան, բայց խնդրել Վեհ. Հայրապետից, որ սրոշ խնդիրներ, եթէ ինքը հսարաւոր կդանի, այժմեանից գործադրութեան դնէ կեանքի մէջ»: Այս բանաձեռը չունեցաւ ոչ մի կողմանակից:

«Ի նկատ առնելով, որ ներկայ ժողովը, որքան և նա հրաւիրուած լինի անկատար ձեռվ, որքան և անսիստեմ լինի թեմերի վրայ մասնաւորների բաշխումը և պատգամաւոր քահանաների բուն ընտրութիւնը, 2) ի նկատ ունելով, որ այս ժողովում ներկայ են ոչ միայն էջմիածնում գըտնուող միաբանները, այլ նաև մեր բոլոր թեմական Առաջնորդները 3) ի նկատ ունելով որ պատմական անցեալում մեր եկեղեց-ազգային ժողովներին մասնակցել են էջմիածնի միաբանները և այն քահանաները, որոնք հսարաւորութիւն են ունեցել գալ ժողովի, 4) ի նկատ ունելով որ ժողովի պատգամաւորական կազմը, իբր հետևանք անսիստեմ զործելակերպի՝ ոչնչով մեղաւոր չէ, որ ինքը փոքր թւով է մասնակցում այս ժողովին, ուստի և ի նկատի առնելով որ յունիսի 12-ի 1917 թ. հայ կուսակրօն և աշխարհիկ հոգեորականութեան համագումարը կազմուած է զուտ հոգեորական դասից մի երկոյթ, որ մեր ազգային պատմութեան ընթացքում տեղի չի ունեցած երբէք, որ Հայստաննեայց եկեղեցւոյ տէրը և տնօրէնը է ինքը հայ ազգը, ամբողջ հայ ժողովուրդը, որ այս ժողովում բացի նրանից որ Ռուսահայ որոշ հատուածներից իսկ չկան հո-

գնորական ներկայացուցիչներ, այլ և բացակայում են Տաճկահայոց, Պարսկահայոց, Եւրոպայի, Ամերիկայի և այլ հոգևոր ներկայացուցիչները։ Սյս ժողովը օրէնսդիր լինել չի կարող, այլ միմիայն խորհրդակցական է կամ նախապատրաստական, որի որոշումները և վճիռները Հայոց եկեղեցւոյ համար պարտադիր լինել չեն կարող, այլ որպէս ցանկութիւն առաջարկուել ի տնօրէնութիւն տպագայ ազգային եկեղ. ժողովին։ Սյս բանաձեռ ստացաւ 22 ձայն, որ և ընդունուած համարուեցաւ և նիստը փակուեցաւ։

Սյս բանաձեռն կցւում է նաև Արուէն վարդապետի տուած գրաւոր բացատրութիւնը, որ արձանագրուած է հինգերորդ նստի արձանագրութեան մէջ՝ ի պատասխան Տ. Ատենապետի հարցման և ի պարզաբանութիւն տուած բանաձեռի այն կէտին, որ վերաբերում է ժողովի որոշ խնդիրների որոշումները պարտադիր անելու նկատմամբ, այսինքն ով պիտի լինի սանկցիա տուողը ժողովի պարտադիր որոշումները գործադրելու համար։ «Ատենապետութեան հարցումին տալիս եմ հետեւեալ բացատրութիւնը. — Ներկայ ժողովի գումարման հետ կապուած բոլոր հանգամանքներն ի նկատի առած՝ կարելի էր դալ միայն մի եղբակացութեան, այն է, որ ձգտում կայ այս ժողովը գարձնել զուտ խորհրդակցական մի համագումար։ Տրամադրութիւններն ի նկատի առնելով ես իմ խօսքերին և բանաձեռն մէջ արի ժողովի նպատակների վերաբերմամբ արդէն յայտնի ձևակերպութիւնը։ Սյստեղ ինձ մնում է յարել, որ պատմութիւնը մեզ տուել է ձեեր, որոնցից մենք խուսափել չենք կարող։ Պատմութիւնն ասում է, որ միակ որոշումները պարտադիր անել տալ եկեղեցու մէջ, դա միայն Ամենայն Հայոց Հայրապետն է, որ եկեղեցու լրութեան զլուխն է։ Իսկ այն ինդիրները, որոնց մասին մեր որոշումները պէտք է անցնին ազգային եկեղեցական վըճռահատութեանը, այդ որոշումները միայն ընդհանրական Հայրապետի միջոցով կարող են համնել մեր եկեղեցու կանոնադիր ժողովին։»

## ՆԻՍՏ ԶՈՐԾՈՐԴ

Բացուած յունիսի 15-ին, երեկոյեան ժամը 8-ին, իներկայութեան 63 ժողովականների, ատենապետութեամբ Տ. Մեսրոպ ա. ք. Մելեանի։

Ժողովի նիւթն է տնտեսական սեկցիայի գեկուցումը։ Սեկցիայի նախագահ՝ Տ. Եղիշէ ա. ք. Գեղամեանը ներկայացրեց սեկցիայի աշխատանքների համառօտ պատկերը հեակեալ բովանդակութեամբ։ «Սեկցիան անպատուաբեր և նուաստացուցիչ գանելով քահանայական հասոյթների ներկայ ձեր, որոշում է փոխարինել այդ կանոնաւոր եռակով, որ պիտի ստացուի եկեղեցական ընդհանուր մնդուկից, ուր պիտի ժողովուին թէ եկեղեցական, թէ քահանայական և թէ թեմական բազմազան աղբիւրներից ստացուած արդիւնքները։ Նահանգական և գաւառական քաղաքների և գիւղական քահանաների, այլ և շրջանային գործականների համար ուժիկների որոշ նորմա սահմանելուց յետոյ՝ սեկցիան վանհայրերի և թեմական առաջնորդների ուժիկները թողել է ապագայ թեմական խորհուրդների տնօրէնութեանը, իսկ քահանաների կենսաթոշակի, խնայողական գանձարանի և որբոց ու այրեաց վերաբերեալ խնդիրները՝ այդ առթիւ կազմուելիք յատուկ մի յանձնաժողովի։ Կալուածական և դպրոցական խնդիրների մասին նա ոչ մի որոշում չի կայացրել, որովհետեւ համագումարը միտք ունի յատուկ սեկցիա կազմելու այդ մասին։ Սեկցիան ենթադրում է ունենալ ս. Էջմիածնում եկեղեցական ընդհանուր և կենտրոնական մնդուկ և դրանց սաորաբաժանումներն էլ թեմերում։ Ս. Էջմիածնի և Սևանայ վանքերի միաբանութիւնների ուժիկների որոշումները նա թողնում է այդ վանքերի միաբանական վարչութիւններին և ազգային-կրօնական Գերագոյն ժողովին։»

Սյս մասին եղած թեր ու դէմ վիճաբանութիւններից յետոյ՝ ժողովականների կողմից առաջարկուած մի շարք բանաձեռ միմեանց համաձայնեցնելուց յետոյ, ժողովն

ընդունեց նոր միացեալ բանաձև, որ հետեւալն է. «Ներկայ եկեղեցական ժողովը՝ լսելով տնտեսական սեկցիայի համառօտ զեկուցումը հոգեոր դասի նիւթական ապահովութեան հարցի մասին և կարծիքների փոխանակութիւն ունենալով, արդի կեանքի պայմաններում անհրաժեշտ է համարում հոգեոր դասի հասոյթների հին ձեր փոխարինել նորով՝ ոռմկի սահմանումով»:

Այս սկզբունքի իրազործումն արագացնելու և ապահով աղբիւրներ հայթայթելու համար կարևոր է համարում խնդրել, որ Ազգիս Հայրապետը յորդորական կոնդակ հրատարակէ, հոգեորականութեան ապահովութեան ֆոնդ հիմնուի և. էջմիածնում, ծխական և թիմական խորհրդակցութիւններ կազմուին առաջնորդների և փոխանորդների ղեկավարութեամբ, և. էջմիածնում մնայուն յանձնաժողով հաստատուի կատարուած աշխատանքները ամփոփելու և ընդհանուր ծրագիր մշակելու համար, և ապա թէ Հայրապետական կոնդակով ի գործադրութիւն առաջարկուի»:

Յայտարարուեցաւ ժողովին, որ Տ. Գարեգին եպիսկոպոսը յաջորդ օրը, ցերեկուայ ժամը 1-ին դասախոսութիւն պիտի կարդայ հայ եկեղեցու կատարելիք դերի մասին և նիստը փակուեցաւ 11<sup>1/2</sup>-ին:

## ՆԻՍՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բացուած յունիսի 17-ին, երեկոյեան ժամը 8-ին, առենապետութեամբ Տ. Գէորգ եպիսկոպոսի և իներկայութեան 64 ժողովականների:

Ժողովի նիւթն էր դպրոցական-կալուածական սեկցիայի զեկուցումը, Սեկցիայի նախագահն էր Տ. Մեսրոպ եպիսկոպոսը, իսկ քարտուղարն ու զեկուցանողը հ. Արամ սարկաւագ Ագուլեանը:

I. Սեկցիան իւր առաջ զրուած դպրոցական խնդիրների մասին հետեւեալ եղակացութեան է յանդել. «Մինչեայժմ հայոց դպրոցները եղել են ժողովրդինը, բայց հան-

դամանքների թելադրութեամբ դպրոցների զեկը յանձնուած էր հոգեոր իշխանութեան. այժմ նոր ազատ կարգերի շնորհիւ ժողովուրդը (համայնքը) լիակատար տէր ու տնօրէն է հայ դպրոցին. Հայոց եկեղեցական-ծխական դպրոցները պահպանել են կամ ծխական համայնքների սեփական միջոցներով, կամ վանքերի ու եկեղեցական կարուածների արդիւնքներով և կամ բարեգործական ընկերութիւնների ու անհատների օժանդակութեամբ։ Սյսուհետեւ այն գպրոցների պահպանութեան և վարչական ու ծրագրային խնդիրների որոշման հարցերում պէտք է նպաստող հիմնարկութիւններն ու անհատները ունենան իրենց դրական իրաւունքը։ Յատկապէս եկեղեցական և վանական նպաստով պահպանուող դպրոցները պէտք է կառավարուեն հայ եկեղեցուն պատկանող համայնքների և վանական կառավարութիւնների հայեցողութեամբ»։

Այս նիւթի մասին սեկցիան ներկայացրել է նաև իւր երկու անդամների բանաձեններն են. բ. բանաձև՝ «Ինկատի առնելով յառաջ գալիք պետական և ազգային եկեղեցական նոր իրաւակարգերը՝ ժողովը գտնում է, որ կարող են գոյութիւն ունենալ ազգային-պետական դպրոցներ, որոնց վարչականն ու ուսումնականը կլինի հայ համայնքների ձեռքը, իսկ անտեսականը կտայ պետութիւնը։ Ներկայութու գոյութիւն ունեցող եկեղեցական-ծխական դպրոցները բնականաբար կերպարանակիութեան պիտի ենթարկուին, որոնց կայքն ու գոյքը պիտի մնայ հայ ծխական համայնքներին՝ ստեղծուելիք դպրոցների կրօնա-բարոյական գաստիարակութեան, աստուածահաճոյ հաստատութիւնների կազմակերպութեան ու պահպանութեան և ազգային կուլտուրական կարիքներին ծառայեցնելու նոլատկուի (Գէորգ եպս.)»։

գ. բանաձև. «Եկեղեցական ծխական համարել և պահել իրենց բոլոր եկամուտներով ոչ միայն այնպիսի դպրոցներ, որոնք եկեղեցական եկամուտներով են պահեռում կամ նպաստ ստանում, այլ և այնպիսիները, որոնք ամբողջապէս կամ մասամբ օժանդակութիւն են ստացել անհատ-

ներից կամ հաստատութիւններից, քանի նրանք չեն հրաժարուել իրենց նախկին որոշումներից (Գարեգին եպս.)»:

Զայների ճնշող մեծամասնութեամբ ժողովը ընդունեց սեկցիայի եղբակացութիւնը, այն է ա. բանաձեռ հետևեալ յաւելումով՝ «Պետական դպրոցները ունէին հակազդային ուղղութիւն. ո. Էջմիածնում գումարուած կուսակրօն և աշխարհիկ հոգեսրականների այս ժողովը սպասում է, որ Ռուսական Սահմանադիր ժողովը իրաւունք կտայ հայ ազգին իր երեխաներին կրթել աղդային ոգով պետական դպրոցներում՝ դարձնելով իշեալ դպրոցներում կրօնն ու հայոց լեզուն պարտադիր»:

II. Փողովը անցաւ կալուածական խնդրի քննութեան, որի մասին սեկցիան հետևեալ եղբակացութեանն է յանդել՝ «Ազգային կալուածները կազմում են եկեղեցական և վանական կալուածները: Եկեղեցական կալուածները կառավարուում են համայնքից ընտրուած հոգաբարձական մարմիններով և նոցա արդիւնքները համայնքի որոշմամբ գործադրուելու են դպրոցական և կուլտուրական նպատակների համար: Վանական կալուածների վերաբերմամբ սեկցիան շեշտել է, որ սոքա կառավարուում են ո. Էջմիածնի Սինօդի վերին հսկողութեամբ և առաջնորդների կամ կոնսիստորեաների մասնակցութեամբ: Նոցա արդիւնքները մտնում են ո. Էջմիածնի գանձարանը, որոնցով պահուում են Հայրապետարանը, միաբանութիւնը և Գէորգեան ճեմարանը: Բացի կալուածական եկամուտները ո. Էջմիածնի վանքը մուտք է ստանում թեմական արդիւնքների յաւելումից, զանազան եկեղեցական մատեանների տպագրութիւնից և իր գրամագլխի տոկոսներից: Ծախքի ամենախոշոր յօդուածը կազմում է Գէորգեան ճեմարանի պահպանութիւնը: Ակներկ է որ հնչպէս ծխական եկեղեցական կալուածների արդիւնքները գործադրուում են դպրոցների վերայ, այնպէս և Մայր Աթոռի և այլ վանքերի կալուածոց արդիւնքները գործադրուում են Գէորգեան ճեմարանի և այլ փոքր դպրոցական հաստատութիւնների պահպանու-

թեան վերայ: Սեկցիայի եղբակացութիւնն այն է, որ այսուհետեւ կը թէ եկեղեցական և թէ վանական կալուածների արդիւնքները գործադրուին հայ դպրոցական-ազգային-կուլտուրական նպատակների համար, հիմնական վոփոխութիւն մտցնելով նոցա կառավարութեան ձեր՝ մէջ ժողովրդական տարրերի մասնակցութեամբ»:

Համագումարը կարծիքների վոփանակութիւնից յետոյ ընդունեց սեկցիայի եղբակացութիւնը, որի ամփոփումներն են իբրև բանաձև «Այսուհետեւ ևս, նոր իրաւակարգի ժամանակ, եկեղեցական կալուածները համայնքի ընտրած մարմին ձեռքով պիտի կառավարուին և զուտ արդիւնքը գործադրուի համայնքի որոշմամբ՝ դպրոցական և կուլտուրական ազգային նպատակների և եկեղեցու բարեզարդութեան ու կարիքների համար»:

«Այսուհետեւ ևս վանական կալուածների արդիւնքը պիտի գործադրուի հայոց դպրոցական, կուլտուրական նպատակների և վանքերի պահպանութեան ու բարեզարդութեան համար: Կալուածների կառավարութեան ձեր պիտի ենթարկուի վոփոխութեան, ի նկատի ունենալով եկեղեցու ժողովրդական ոգին և ներկայ ժամանակի ընտրողական լայն սկզբունքները: Պէտք է կազմակերպել վանական կալուածների կառավարութեան համար ժողովրդից ընտրուած մարմիններ, որպիսիք արդէն մի քանի վանքերում գոյութիւն ունին վանահայրերի նախազահութեամբ»: Այս երկու բանաձևերն էլ միտհայն ընդունուեցան:

Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 11½-ին:

## ՆԻՍ ՎԵՑԵՐՈՐԴ

Բացուած յունիսի 18-ին, ատենապեառութեամբ Ռուբէն ա. ք. Բէկդուկեանի և ի ներկայութեան 62 ժողովականների:

Ժողովի խորհրդածութեան նիւթն էր Ա. սեկցիայի

զեկուցումը՝ «Հայաստանեայց եկեղեցու և եկեղեցականութեան վիճակի բարեփոխութեան և կանոնական խընդիրներ»:

Զեկուցման ընթերցումից յետոյ կարծիքների փոխանակութիւն տեղի ունեցաւ և սեկցիայի մշակած մի հարցի մասին, այն է «Եկեղեցին իբրև գործօն հայ-ազգային-եկեղեցական կեանքում ներկայումս», արտայայտուեցան երկու հոսանքներ. մէկը շեշտում էր ներկայումս եկեղեցու միայն կրօնաբարոյական դերը՝ մերժելով նրա պատմականը, քաղաքականն և կուլտուրականը, իսկ միւսը պաշտպան էր եկեղեցու պատմական դերը շարունակելուն:

Սեկցիան բերել էր երկու բանաձեռ. ա. «Հայ եկեղեցին, իբրև ազգային եկեղեցական գործոն ունեցել է հայ պատմական կեանքում մեծ դեր ժողովրդի պաշտպանութեան գործում հայկական քաղաքական իշխանութեան անկումից մինչև մեր օրերը: Նա այդ դերը իւր վրայ վերցնելով, աստիճանաբար դադարում է լրութեամբ իւր խական քրիստոնէական պարագը կատարելուց և ապա ուրեմն կորցնում է իւր անաղարտութիւնը՝ հանդիսանալով զիստորապէս որպէս վարչական և քաղաքական մարմին: Մենք ընդունում ենք, որ եկեղեցին դադարելու է քաղաքական-կուլտուրական գործոն հանդիսանալուց և մնալու է որպէս ազգային-եկեղեցական գործոն իւր յարակից հաստատութիւններով այն ժամանակ, երբ ընդհանուր հայ ազգութիւնից ճանաչուած օրինական մի մարմին հնարաւորութիւն կստանայ իր ձեռքն առնելու այն բոլոր հաստատութիւնները, որոնք կապ չունին հայ եկեղեցու անմիջական պաշտօնի և պարտականութիւնների հետ: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է այժմեանից ձեռնամուխ լինել այսպիսի բարեփոխութիւնների, որոնք հեշտացնելու են վերոգրեալ նպատակի կիրառումը»: Այս բանաձեռ սեկցիայում ստացել է 10 ձայն՝ 17 ձայնից:

բ. «Ի նկատի ունենալով, որ Հայոց եկեղեցին ազգային եկեղեցական կեանքում մինչև օրս ըստ կարելոյն ունեցել է իւր գործոն դերը, այսինքն նպաստել է հայ կուլ-

տուրայի զարգացման գործին, զարկ է տուել հայ ազգի զրին ու զբականութեանը, վառ է պահել կրօնական զգացմունքը, ծառայել է աւետարանի տարածման գործին, պաշտպանել է հայ ժողովրդի ամբողջութիւնը, այսուհետեւ ևս նա ոլէտք է շարունակէ իւր պատմական դերը այն չափով, ինչ չափով կը հարկատրեն ապագայ քաղաքական հանգամանքները հայ ազգի ազատագրութեան վերաբերմամբ»: Այս բանաձեռ սեկցիայում ստացել է 7 ձայն:

Ժողովը՝ կարծիքների լայն փոխանակութիւնից յետոյ, քուէարկութեան դրաւ յիշեալ երկու բանաձեռները, որոնցից առաջինը ստացաւ 17 ձայն, իսկ երկրորդը՝ 34 ձայն:

Ժողովը փակուեցաւ և յաջորդ նիստը նշանակուեցաւ նոյն օրը ժամը 8-ին:

## ՆԻՍՏ ԵՕԹԵՐՈՐԴԻ

Բացուած յունիսի 18-ին, երեկոյեան ժամը 8-ին առենապետութեամբ Տ. Ռուբէն ա. ք. Բէկգիւկեանի և իներկայութեան 62 ժողովականների:

Ժողովի դրադման նիւթն էր Ա. սեկցիայի դեկուցման երկրորդ հարցը՝ «Հայ նողերականութեան մտաւոր և բարոյական մակերեսոյթի բարձրացման խնդիր»ը: Բացատրուեցան սեկցիայի տեսակէտները այս խնդիր մասին և կարգացուեցան նրա հետևեալ բանաձեռ, «Հայ նողերականութեան մտաւոր մակերեսոյթը բարձրացնելու համար նշանակել կրթական ցենզ առնուազն միջնակարգ դպրոցների աւարտման, գիւղական քահանաների համար սրան աւելացնել և լրացուցիչ գասընթացներ գործնական առարկաներից, տարրական գիտելիքներ առողջապահութիւնից, գիւղատնտեսութիւնից և օրէնսդիրութիւնից, իսկ քաղաքների համար՝ միջնակարգ դպրոցներին կցել նաև եկեղեցական-կրօնական դասընթացներ, եւ որպէս զի քահանաները նախապէս վարժուած լինին եկեղեցական սպասաւորութեան գործին, անհրաժեշտ է, որ մինչև քահանայ կամ սարկաւագ ձեռ-

Նադրուելը 2—3 տարի որպէս սոսկ սպասաւոր ծառայեն եկեղեցուն, որպէս տիրացու մի քահանայի մօտ: Բարոյականը բարձրացնելու համար բարոյականի պտտասխանաւութիւնը թողնել այն շրջանի քահանայութեան ժողովի վրայ, որին նա պատկանում է. լինելու են քահանայական շրջանային ժողովներ, որոնք ուրիշ հարցերի հետ պէտք է հետևեն նաև իրենց անդամների բարոյականի վրայ: Ժողովների այդպիսի որոշումները պէտք է յանձնուեն հոգեոր իշխանութեան ի գործադրութիւն: Իսկ ինչ վերաբերում է ներկայ հոգեորականութեանը, նրանց մտաւոր թերին լրացնելու համար շրջանային ժողովը կազմակերպում է կրօնական-բարոյական նիւթերի մասին դասախոսութիւններ»:

Ժողովը կարծիքների փոխանակութիւն է ունենում առաջարկուած խնդրի շուրջը և որոշում է. ա. որ քահանայացուն պիտի ունենայ միջնակարգ դպրոցի աւարտման ցենզ (միաձայն). բ. որ քաղաքի քահանաները պիտի անցնեն 2 կամ 4. ամեայ կրօնական դասընթաց (ձայների ճնշող մեծամասնութեամբ). գ. որ գիւղական քահանան պէտք է ունենայ լրացուցիչ կրթութիւն առողջապահութիւնից, օրէնսդիրութիւնից և տնտեսագիտութիւնից (38 ձայնով): դ. որ պէտք է հիմնել կրօնա-բարոյական դասընթացներ (ձայների մեծամասնութեամբ): Իսկ բարձրագոյն ուսումն ստացողներին հոգեոր կոչման մէջ ընդունելու հարցը առանց որ և է նախապատրաստութեան կրօնական և հայագիտական գիտելիքներից՝ մերժուեցաւ 30 ձայնով ընդդէմ 25-ի:

Նիստը փակուեցաւ  $11\frac{1}{2}$ -ին, իսկ հետեւելը՝ նշանակուեցաւ յունիսի 19-ին առաւօտեան  $9\frac{1}{2}$  ժամին:

## ՆԻՍՏ ՈՒԹԵՐՈՐԴԻ

Բացուած յունիսի 19-ին, առաւօտեան ժամը  $9\frac{1}{2}$ -ին, ատենապետութեամբ Մեսրոպ ա. ք. Մելեանի և ի ներկայութեան 51 ժողովականների:

Խորհրդածութեան նիւթին էր՝ Ա. սեկցիայի ղեկուցման երրորդ հարցը՝ «Կուսակրօն հոգեորականութեան վերակենդանացման և վանքերի վերածնութեան խնդիրը»: Սեկցիայի կարծիքները այս խնդրի շուրջը արտայայտուած են ժողովին ներկայացրած հետեւել երեք բանաձեկրով. ա. «Հայոց առաքելական եկեղեցին իւր բազմադարեան գոյութեան ընթացքում ընդունել է իւր մէջ օտարամուտ տարբեր և ապա ուրեմն խախտել է իւր պարզութիւնը. այդպիսի տարբերից մէկն է ամուրի հոգեորականութիւնը, որի վերակենդանացման խնդիրն է դրուած այժմ: Զերմ կողմանակից լինելով եկեղեցու պարզութեանը և հետեւելով առաքելական շրջանի վարչակազմին՝ գտնում ենք, որ մեր եկեղեցին պիտի ունենայ միայն ամուսնաւոր քահանայութիւն. այդ պաշտօնէութիւնից աւելի պատրաստուածներն ու ընդունակները ընտրութեամբ պիտի կոչուին եպիսկոպոսութեան (տեսուչ եկեղեցեաց) և եպիսկոպոսապետութեան (Հայրապետութեան): Ամուրի հոգեորականութեան պահանջ առանձնապէս չզգալով՝ այդպիսիներին, եթէ կան, տեղաւորել վանքերում և ամբողջապէս նուիրուել վանական կեանքից բղիող աշխատանքների, իսկ եթէ այդպիսիներից ժողովրդի ընտրութեամբ կոչուին եպիսկոպոսութեան (տեսչութեան)՝ այդպիսիք պէտք է ամուսնանան: Քահանայութեան մէջ ընդունակութիւններով աշքի ընկնող և քարոզչական տաղմանդ ունեցող անձինք կարող են կոչուել այդպիսի պաշտօնի «վարդապետ» տիտղոսով: Սեկցիայում ստացել է 4 ձայն:

բ. բանաձե. «Կուսակրօն հոգեորականութիւնը պէտք է կենդրինանայ վանքերում և այլ ևս որպէս բոլորպին ազատ մի դասակարգ վարչական իշխանութեան բոլոր ֆունկցիաներից՝ ցանկութիւն և հարաւորութիւն ունեցած դէպքում կարող է աշխատել արդիւնաւոր դարձնել իւր գոյութիւնը գիտութեան, գեղարվեստի և լուսաւորութեան այս կամ այն ասպարէզում, իսկ եկեղեցու հոգեոր տեսչութեան և կարեոր ձեռնադրութիւնների պաշտօնը կատարելու համար իւրաքանչիւր մի թեմ պիտի ունենայ իւր եպիսկոպոսի, որդութիւր ընտրուի անխտիք

(10494-54) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՆԱԿԱՆ ՎԱՐԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԴՐԱԿԱՆ ԱՆԴԱՐԾ Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

13042-57

կուսակրօն կամ աշխարհիկ հոգևորականութեան ըստ ամենայնի արժանաւոր ճանաչուած անհատներից։ Եպիսկոպոսը լինելով միաժամանակ և որպէս հայ ժողովրդի միջազայրում ապրող մի ազատ քաղաքացի պիտի անպայման ամուսնացած լինի։ Սեկցիայում ստացել է 4 ձայն։

Գ. բանաձև. «Կուսակրօն հոգևորականութիւնն անցեալում առաջնակարգ դեր է կատարել հայ կեանքի կրօնաբարոյական, գրական-գիտական նաև քաղաքական ու հասարակական բոլոր ասպարէզներում։ յետազայում հասարակական կեանքի զարգացումը հրապարակ է հանել հասարակութեան նաև միւս դասերի ստեղծագործող ոյժերը, և կուսակրօն հոգևորականութիւնը բնականաբար տեղի է տուել նրանց։ Կուսակրօն հոգևորականութիւնն այնուամենայնիւ հայ եկեղեցու առաջադիմութեան ինդրում ունի իւր անհրաժեշտ և պատասխանատու դերը, ուստի և պարտաւոր է իւր մտաւորի և բարոյականի մակերեսոյթը բարձրացնել։ Դորա համար պէտք է կուսակրօն հոգևորականութեան շարքը մտնել ցանկացողից պահանջել առնուազն միջնակարգ զպրոցի աւարտման վկայագիր։ Ընդունելով որ կուսակրօնութեան շարքը մտնողը գիտակցաբար է իւր կոչումը ստանձնում, այնուամենայնիւ թոյլատրելի պէտք է համարել կուսակրօնութիւնից ամուսնանալով աշխարհիկ հոգևորականութեան շարքն անցնել և ծուխ հովուել, երբ առ այդ կըկոչուի ծխի ընտրութեամբ։ Վարչական պաշտօնէութիւնը այլ ևս միմիայն կուսակրօն հոգևորականութեան մենաշորհը չհամարել։ ամուսնաւոր հոգևորականութիւնից ևս կարող են ընտրուել վարչական պաշտօնների համար, բացի առաջնորդական և հայրապետական պաշտօններից։ Առաջնորդական պաշտօնի համար կարող են կոչուել նաև այրիացած քահանաները՝ ընդունելով եպիսկոպոսական աստիճան»։ Սեկցիայում այս բանաձևը ստացել է 9 ձայն։

Առաջարկուած ինդիբների շուրջը կարծիքների փոխանակութիւնն է տեղի ունենում և կազմւում է երեք հոսանք. ա. կուսակրօնութիւնը վերացնել, բ. կուսակրօնութիւնը պահպանել և վերակենդանացնել և գ. կուսակրօնութեան ինդրի լուծումը թողնել իրեն կուսակրօնութեան։

Ժողովը՝ ի նկատի առնելով որ կուսակրօնութիւնը հայոց եկեղեցու մէջ ունի իւր ծագման պատմական պատճառները, որ նա գարեր շարունակ գոյութիւն է ունեցել մեր կեանքի մէջ և մեծ դեր է կատարել. այդպիսի մի ինստիտուտ գրչի մի շարժմամբ վերացնել առանց հարցի խորը ուսումնասիրութեան կը լինէր շուտափոյթ և չմտածուած քայլ. ուստի որոշում է (գրեթէ միաձայն) թողնել կուսակրօնութեան կարգաւորման հարցը իրեն կուսակրօնութեանը։ Սոյնպէս որոշում է յանձնել ո. էջմիածնի միաբանութեան մշակմանը նաև «վանքերի, իբրև բարոյական ազդակների վերածնութեան խնդիրը»։ Ընդունելով հարցի այսպիսի լուծումը ժողովը ընդունում է նաև հետեւեալ երկու սկզբունքները. 1. «Հայոց եկեղեցու նուիրապետութիւնը պահպանում է»։ 2. «Հայոց եկեղեցու վարչական պաշտօնէութեան համար անխտիր կերպով ընտրում են անձններ և կուսակրօն և աշխարհիկ հոգևորականութիւնից»։ Վերջին հարցի վերջնական ձևակերպումը թողնում է վարչական սեկցիային։

Այս ժողովի խորհրդածութեան նիւթը գառնում են մի շարք կանոնական խնդիրներ։ Նախապէս սեկցիան կարդում է այս խնդիրների մասին իւր բանաձեռ. «Հայոց եկեղեցին, որպէս արտադրութիւն դարեր ապրող հայ ժողովրդի ոգու՝ պէտք է պահպանէ նոյն ոգին և զարգացնէ այն։ Բայց ի նկատի ունենալով, որ վերջին դարերի ընթացքում եկեղեցու ժամակարգութեան և ծիսակատարութեան մէջ մտցրած են կրկնութիւններ և աւելորդաբանութիւններ՝ կարիք կայ վերացնելու որոշ երկարաբանութիւնները, նոյնպէս և կրկնութիւնները պահպանելով զգուշաւոր վերաբերմունք դէպի այդ փոփոխութիւնները, որի համար անհրաժեշտ է մասնագէտ և հմուտ անձերից կազմել մի յանձնաժողով պարտադիր անելով աշխարհաբար լեզուի գործածութիւնը։ Քարոզը և երգը կազմելու է մեր եկեղեցու ժամակարգութեան անհրաժեշտ մասը. ցանկալի է երաժշտութիւնն»։ Այս բանաձեռ սեկցիայում անցել է միաձայն։

Արծարծուած ինդիբների շուրջը տեղի է ունենում է կարծիքների փոխանակութիւն և ի վերջոյ ընդունում է

ժամասացութեան կրծառման, ինչպէս նաև նրա աշխարհաբարի վերածելու առաջարկը՝ բացի շարականներից և պատարագից:

Կարդացւում է սեկցիայի մշակած բանաձելը քահանաների կրկնամուսնութեան մասին՝ «Ամուսնութիւնը սուրբ է. հետեալիս աշխարհիկ հոգևորական դասի մէջ մտնող անձանց համար եղած ամուսնական բացառիկ օրէնքները պէտք է վերանան» և ընդունում է ժողովի կողմից հետեալ յաւելումով՝ «ամուրին չի կարող քահանայ դառնալ»:

Նիստը փակւում է հետեալը նշանակւում է երեկոյեան ժամը 8-ին:

## ՆԻԾ ԻՆՆԵՐՈՒԴ

Բացուած է յունիսի 19-ին, երեկոյեան ժամը 8-ին, ատենապետութեամբ Տ. Գէորգ եպիսկոպոսի և իներկայութեան 55 ժողովականների:

Ժողովի նիւթն է. 1. Ա. սեկցիայի գեկուցման շարունակութիւնը՝ ա. քահանաների տեղափոխութեան հարցը. բ. քահանաների թաղրոն, համերգ և այլ կրթիչ վայրեր յաճախելու հաբցը. գ. սքեմակրութեան հարցը արտաքոյ եկեղեցւոյ և պաշտօնավարութեան:

2. Այժմէական հրատապ խնդիրներ.

Ժողովը օրակարգի առաջին խումբ հարցերի մասին կարծիքների փոխանակում կատարելով որոշեց՝ ա. «Թոյլադրել քահանաների տեղափոխութիւնը նին և նոր ծխերի փոխադարձ համաձայնութեամբ: Քահանան կարող է մի անգամ միայն տեղափոխուել. տեղափոխուելու պայմաններից մէկն էլ պահանջուած ցենզ ունենալն է: Նախկին ծխի անհամաձայնութեան դէպքում թեմական խորհուրդը իրաւունք ունի քննել գործը և նոր վճիռ կայացնել:

բ. «Թոյլադրում է հոգևորականութեան յաճախել թաղրոն, դասախոսութեան և այլ կրթիչ վայրեր»:

գ. Ժողովը ի նկատի առնելով որ սքեմը ժողովրդի աջքում անբաժանելի է հոգևորականից, որ դարերի ընթացքում ժողովուրդը պատկառանքով է վերաբերուել դէպքի

սքեմը, բարուոք է համարում սքեմակրութիւնը քահանայի համար պարտադիր ճանաչել նաև արտաքոյ եկեղեցւոյ և հոգևոր պաշտօնավարութեան: Այս որոշումը կայանում է հակառակ սեկցիայի հետեալ բանաձեկի՝ «թոյլադրելի համարել և ոչ պարտադիր սքեմի գործածութիւնը թարուն և այլ կրթիչ վայրեր յաճախելիս»:

Ժողովը անցնում է երկրորդ խումբ հարցերի քննութեան. զեկուցանողն է Տ. Մեսրոպ ա. ք. Մելեանը:

Զեկուցումը շօշափում է հինգ հարցեր. 1) Հայ հոգևորականութեան դիրքը հանդէպ Ռուսիոյ ժամանակաւոր կառավարութեան.

2. Հայ եկեղեցու սկզբունքները իբրև ապացոյց իր ժողովրդավար լինելուն.

3. Հայ պղպային եկեղեցու դիրքը հանդէպ քաղաքական և քաղաքացիական պահանջների.

4. Հայ եկեղեցու դիրքը հանդէպ հայկական համագումարի պահանջների.

5. Կոչ.

Սոյն նիստում քննուում են առաջին երեք հարցերը միայն. առաջին հարցի նկատմամբ ժողովը գրական վերաբերմունք է ցոյց տալիս՝ համարելով Ռուսաստանում կատարուած ներկայ յեղաշրջումը յօգուտ ազգային շահերի, երկրի բարեկեցութեան, յառաջադիմութեան և բոլոր ազգերի ազատ զարգացման, ուստի և ողջունում է կատարուած յեղաշրջումը: Իսկ ինչ կվերաբերի ժողովի առածած զգացմունքների արտայալութեանը դէպի նոր կառավարութիւնը՝ համարում է ուշացած և աւելորդ այն պատճառի, որ ազգիս ղետը իր ժամանակին արդէն կատարել է այն: Գալով երկրորդ խնդրին, որպէս վարչական սեկցիայի նիւթ որոշուեցաւ յանձնել նրան ի քննութիւն: Երրորդ խնդրը մերժուեց, որպէս զուտ քաղաքական ընոյթ կրող մի ծրագիր, միհնոյն ժամանակ ցանկութիւն յայտնելով որ իւրաքանչիւր հոգևորական, իբրև հայ անհատ մամնակցութիւն ունենայ քաղաքական և քաղաքացիական խնդիրների մէջ:

Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 11½-ին:

## ՆԻՍՏ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Բացուած յունիսի 20-ին, երեկոյեան ժամը 8-ին, առենապետութեամբ Տ. Գէորգ եպիսկոպոսի և իներկայութեան 48 ժողովականների:

Ժողովի նիւթն էր. 1) Այժմէական խնդիրների 4-րդ կէտը՝ «Հայ եկեղեցու դիրքը հանդէպ ոռւսահայ համագումարի և Սահմանադիր ժողովի. 2) Կոչ ուղղուած նովկասի ազգութիւններին:

Դ. Ե և Զ նիստերի արձանագրութիւնները կարդալուց և ընդունելուց յետոյ՝ ժողովը անցաւ օրակարգի առաջին խնդրի քննութեան: Մաքերի փոխանակութիւնից յետոյ պարզուեցաւ, որ առաջարկուած հարցի շուրջը կան տարբեր կարծիքներ, որոնք մէջ են քերւում արուած կարեոր բանաձևերով. ա. ի նկատի առնելով, որ մինչ այսօր ազգային և քաղաքական դործերում ազգի ներկայացուցիչը և պետք համարուել է Ամենայն Հայոց կաթուղիկոսը, որն և միայն իրաւատէր էր Ռուսահայ ազգային ժողով գումարելու, ես գտնում եմ, որ ինքնակոչ միջկուսակցական մարմինը ուղուրացիայի է ենթարկել Վեհափառ կաթուղիկոսի իրաւունքը, որի գէմ բողոքելով առաջարկում եմ հետևեալը. նախ՝ որ կաթուղիկոսն ունենար օգոստոսի 20-ին գումարուելիք ժողովին ներկայացուցիչներ այնքան թուով, որքան ինքը կը կամենար. բ. ներկայ համաժողովը իւր որշումները պաշտպանելու համար նոյնպէս ունենար ներկայացուցիչներ յիշեալ ժողովին»: Այս բանաձելը ստացաւ 6 ձայն:

բ. «Հայ հոգնորականը որպէս անհատ, ազատ է մասնակցելու կամ ոչ առաջիկայ միջկուսակցական ոռւսահայոց համաժողովին: Սակայն հայ հոգնորականութիւնը, որպէս այդպիսին, կամ Ամենայն Հայոց Հայրապետը, որպէս ներկայացուցիչ հայ ազգի և եկեղեցու, պաշտօնական մասնակցութիւն ունենալու չեն այդ համաժողովին, եթէ միայն համաժողովը կազմակերպողները իրենք չդիմեն Վեհափառ Հայրապետին, ինդրելով օրհնել համաժողովը իւր մասնակցութեամբ և կարգադրել որ հայ հոգնորականութիւնը

ժողովի իւր ներկայացուցիչները, ընտրելով իւրաքանչիւր թեմից մի անձն»: Այս բանաձելը ստացաւ 5 ձայն:

գ. «Հայ եկեղեցին, որ ցայսօր հայ ժողովրդի հետ վարել է ազգային կուլտուրական ու քաղաքական խնդիրները՝ պէտք է մասնակցի իւր Վեհափառ Հայրապետի ու նրա ներկայացուցիչների միջոցով առաջիկայ ոռւսահայ համագումարին. իսկ հայ հոգնորականութիւնը պիտի աշխատի ընտրել տալու ազգային եկեղեցու շահերը պաշտպանող պատգամաւորներ»: Այս բանաձելը ստացաւ 14 ձայն:

դ. «Համագումարը ցանկալի է համարում, որ առաջիկայում գումարուելիք ազգային ժողովին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որպէս ազգի վլուխ, ունենայ իւր յատուկ ներկայացուցիչները Միաժամանակ համագումարը որոշում է, որ իւրաքանչիւր անդամ լայն մասնակցութիւն ընդունէ ժողովի ընտրութիւններին, ամեն աջակցութիւն ցոյց տայ նրա յաջողութեանը, հանդէս գալով որպէս հայ ազգի անդամ»: Այս բանաձելը ստացաւ 27 ձայն և անցաւ իբրև ժողովի որոշում:

Ժողովը անցաւ քննելու առաջին հարցի երկրորդ կէտին, այն է թէ մրապիսի դիրք պիտի բռնէ այս համագումարը հանդէպ Խուսաց Սահմանադիր ժողովին. Կարծիքների փոխանակութիւնից երեաց, որ ճառախօսների մեծագոյն մասը, ի նկատի ունենալով սահմանադիր ժողովի եղակի նշանակութիւնը մեր կեանքում, և որ այսուեղ լուծուելու են կարգինալ հարցեր՝ անհրաժեշտ համարեց կազմակերպուած ուժով մասնակցութիւն՝ ունենալ այդ ժողովին՝ մեր ձգտումներն ու մեր ազգային տեսակէտը պաշտամնելու համար: Ցանկալի համարուեց, որ քահանաներից իւրաքանչիւրը կենդանի խօսքով յորդուէ ու համոզէ իւր հօտին մասնակցելու Սահմանադիր ժողովի ընտրութիւններին: Սակայն հայ հոգնորականութիւնը իւր վճռական դիրքը որոշելու համար հանդէպ Սահմանադիր ժողովի, սոյն համագումարը որոշեց առ այժմ սպասել, մինչեւ որ օգոստոսի 20-ին գումարուելիք սուսահայ ազգային համաժողովը որոշէ իւր բռնելիք դիրքը Սահմանադիր ժողովի նկատմամբ:

Այս ժողովը անցաւ օրակարգի երկրորդ հարցին՝ կովկասի ազգաբնակութեան կոչ ուղղելու խնդրին։ Ժողովը՝ ի նկատի ունենալով, որ նման կոչերը շատ սովորական երկոյթներ են և որ և է հիմնական նշանակութիւն չունին՝ ձայների բացարձակ մեծամասնութեամբ մերժեց հրատարակել այն համագումարի անունից։

Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 11½-ին։

## ՆԻԾ ՏԱՅՆ ԵՒ ՄԵԿԵՐՈՐԴ.

Բացուած յունիսի 21-ին, առաւոտեան ժամը 9-ին, ատենապետութեամբ Ռուբէն ա. ք. Բէկովուեանի ի ներկայութեան 42 ժողովականների։

Օրակարգի հարցերն էին. 1) Մեր վերաբերմունքը դէպի տաճկահայ դատը. 2) Մեր վերաբերմունքը դէպի տերրիտորեալ ինքնավարութիւնը և 3) Տ. Մեսրոպ եպիսկոպոսի յարուցած հարցերը. Կարծիքների փոխանակութիւնից յետոյ առաջին հարցի նկատմամբ կազմուեցաւ հետևեալ բանաձեռ. «Մեր ժողովը միայն մի ցանկութիւն կարող է յայտնել, որ Ռուսաստանը իւր դաշնակիցների հետ միասին պիտի ազատէ մեր կոտորւող ժողովրդին տաճկական լծից և տաճկահայերի բախտի որոշումը թողնելու է նոցա, իսկ ուսւահայերի կողմից պէտք է լինի միայն ամեն տեսակի աջակցութիւն»։

Երկրորդ հարցի նկատմամբ ժողովը՝ ընդունելով, որ անհրաժեշտ է այդ հարցով լուրջ զբաղուել՝ որոշեց սպասել մինչև ուսւահայ ազգային ժողովը և տպա տալ նրա նկատմամբ իւր կարծիքը։

Օրակարգի երրորդ յօդուածի մէջ մտան հետևեալ հարցերը. ա. 6. րդ աստիճանի ազգսուցական պսակների թոյլուութիւն. բ. ամուսնացողների մէջ տարիքի տարբերութիւնը. գ. ժամանակաւոր հրահանվներ առաջնորդների նոր ընտրութեան մասին. դ. ընդլայնումն պսակի խորհրդի կատարման ժամանակի. ե. ամուսնալուծական խնդիրներ։

Ժողովը՝ կարծիքների փոխանակութիւնից յետոյ՝ 31 ձայնով առաջին հարցի նկատմամբ ցանկալի համարեց, որ քահանաները անարգել կատարեն 6-րդ աստիճանի ազգակ-

ցական և 5-րդ աստիճանի խնամէական պսակները առանց ճիւղագրութիւնների և գիմուֆների։

Երկրորդ հարցի նկատմամբ՝ ի նկատի առնելով, որ պսակւղների վրայ որոշ ճնշումն է տարիքի սահմանափակումը և երբեմն անբախտ հետևանքներ է ունենում՝ ժողովականներից 18 հոգի ցանկալի համարեցին վերացնել եղած սահմանափակումը։

Երրորդ հարցի նկատմամբ ժողովը ցանկալի համարեց միայն մի թեկնածու ընտրել առաջնորդական պաշտօնի համար առաջարկել Վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն։

Չորրորդ հարցի նկատմամբ ցանկալի համարեց պսակի խորհրդի կատարման օրերը ընդլայնել՝ արգելելով միայն ո. ծննդեան պասին և մեծ պասի առաջին ու վերջին շաբաթներին։

Ժողովի այս որոշումները և առաջարկուած բանաձեռները ատենապետութեան ձեռքով հետևեալ կերպ էր բանաձեած, որ ժողովը ընդունեց ձայնների մեծամասնութեամբ. «Համագումար ժողովի խորհրդակցութեան առարկայ դարձան՝ հաս ու չնասի, ամուսնալուծական հարցերի լուծման, պսակի օրնութեան օրերի սահմանափակումը վերացնելու, առաջնորդական ընտրութեան ազատութիւնը անկաշկանդ կատարելու և չափահաս պսակուողների տարիքների խընդիրներ՝ և ձայնների առաւելութեամբ ստացան յետագայ լուծումը—դիմել Վեհափառ Հայրապետին և խնդրել որ կարգադրէ. ա. հաս համարել արենակցութեան 6-րդ և խնամէական 4 րդ աստիճանները և կատարել անարգել. բ. ամուսնալուծական խնդիրները լուծել թեմական իշխանութեան միջոցով և զործագրել որոշումը, իսկ եթէ կողմերից բոլոր լինի, խնդիրը ներկայացնել կենդրոնական իշխանութեանը. գ. պատկի օրնութիւնը արգելել կատարել միայն ծննդեան պասին և մեծ պասի առաջին ու վերջին շաբաթներում. դ. ազատութիւն առաջ թեմական պատգամաւրական ժողովին իր ցանկացած թեկնածուներից ընտրելու իր առաջնորդին և ներկայացնելու Վեհ. Հայրապետին ի հաստատութիւն և ե. վերացնել չափահաս պսակուողների տարիքների վերաբերմամբ վերջերս սահմանուած տարբերութիւնները։

## ՆԻԱՏ ՏԱՄՆԵՐԿՈՒԽԵՐԱՐԴ

Բացուած յունիսի 21-ին երեկոյեան ժամդ 8-ին, առենապետութեամբ Մեսրոպ ա. ք. Մելեանի և ի ներկայութեան 43 ժողովականների:

Օրակարգի հարցեր. 1. Վարչական սեկցիայի զեկուցումը:

Վարչական սեկցիայի նախագահն է Տ. Գարեգին եպիսկոպոսը, իսկ գեկուցանողը Տ. Արսէն քնն. Սիմեօնեանցը:

Զեկուցումից, երևաց որ վարչական սեկցիան հետեալ կերպ է պատկերացնում հայ եկեղեցու վարչական կազմը. «Հայոց եկեղեցին և Պայրապետութիւնը նոր իրաւակարգի ժամանակ ևս պահպանելով իրենց դարաւոր պատմական ընդհանուր բնոյթը, որոշել է՝ պահպանելով Հայոց նուիրապետական աւանդութիւնները, յարմարեցնել եղած վարչական մարմինները ներկայ ժողովրդավարական սկզբունքներին. Սեկցիան առաջարկում է Հայոց եկեղեցու վարչական կազմակերպութեան հետեալ պատկերը. ա. ծխական ժողով և ծխական հոգաբարձութիւն, անհրաժեշտ մասնակցութեամբ ծխական քահանայի և երեսփոխանի. մեծ քաղաքներում կարիքի գեպքում նաև միացեալ հոգաբարձութեան. բ. Թեմական վիճակային խորհուրդներ. գ. կենդրունական խորհուրդ և. էջմիածնում, բարկացած վեց հոգուց, վարելու Թուսահայոց եկեղեցու վարչական, դատաստանական, տնտեսական և ուսումնաբանական գործերը. դ. Համագոյային խորհուրդ և. էջմիածնում, համայն ազգութեան վերաբերեալ գործերը վարելու համար. ե. Եկեղեցու պետը և ներկայացուցիչն է Ամենայն Հայոց Հայրապետը, որն ընտրում է Համագոյային եկեղեցւական ժողովից և. էջմիածնում. Այդ ժողովը միակ կանոնադիր մարմինն է, որը գումարում է ի հարկին ամենայն Հայոց Հայրապետը»:

Ժողովը՝ կարծիքների փոխանակութիւնից յետոյ՝ որոշեց ընդունել սեկցիայի վարչական ծրագրի ա. յօդուածը հետեալ երեք յաւելումով. 1. ծխական ճանաչուի և իրաւունքներ վայելէ նա՝ ով վեց ամիս ծխական է եղել ու մատեան մուծուել և 19 տարին լրացել է. 2. երեսփոխանը ընտրուի անմիջապէս ժողովրդից և ոչ հոգաբարձութիւնն

ընտրէ լուր կողմից. հոգաբարձութեան անդամ ճանաչուի ծխատէր քահանան, եթէ մէկ է, աւելի եղած դէպքում անդամ կը ճանաչուի ժողովրդից ընտրուածը Յ. եթէ քաղաքի կամ գիւղի մէջ կամ շատ եկեղեցիներ՝ կարելի է նաև կաղմել հոգաբարձութիւնների միացեալ խորհուրդ՝ ընդհանուր հարցերի քննութեան և որոշման համար. Սեկցիայի ծրագրի երկրորդ յօդուածի նկատմամբ ժողովը որոշեց ընդունել մեծ և փոքր թեմեր՝ առաջարկուած վիճակների և թեմերի փոխարէն, իսկ խորհուրդների անդամների թիւը որոշուեցաւ 4-6 հոգի՝ նայելով թեմերի մեծութեան, որնց մէջ 1-2 հոգի հոգեսրականներ պիտի լինեն. Թեմական խորհուրդների անդամները ընտրուում են չորս տարով, նախաղաճներն են առաջնորդները. Զուգընթացաբար շօշացուեց նաև գործականներ ունենալու խնդիրը. ձայների առաւելութեամբ որոշուեցաւ գործականներ ունենալ, որոնք պիտի լինին հոգեսրականներ և որոնց թիւը պիտի որոշէ թեմական իշխանութիւնը, իսկ ընտրութիւնը պիտի կատարէ թեմական խորհուրդը:

Սեկցիայի ծրագրի երրորդ յօդուածի նկատմամբ ժողովը ձայների մեծամասնութեամբ ընդունեց, որ կենդրունական խորհուրդը ընտրուի Թուսահայոց պատգամաւորական ժողովի կողմից. Թեմական պատգամաւորների թիւը լինի 50 հոգի, որոնց թւում նաև ո. էջմիածնի միաբանութեան երկու ներկայացուցիչները. Թուսահայ պատգամաւորական ժողովի նախագահն է Վեհ. Հայրապետը, որին վերապահում է որոշ կանոնական խնդիրներում վճռական ձայն. կենդրունական խորհուրդը բազկացած է վեց անդամից՝ երեքը հոգեսրական և երեքը աշխարհական, որոնք երենց միջից ընտրում են նախագահ. Կենդրունական խորհրդի իրաւասութեան սահմանները լրացրեց ժողովը՝ աւելացնելով «կրօնական» ֆունկցիա. Սեկցիայի ծրագրի չորրորդ յօդուածը, որ վերաբերում է համագոյային խորհուրդի ստեղծման և. էջմիածնում՝ ժողովը առայժմ վաղաժամ համարեց այդ մասին որոշում կայացնել:

Սեկցիայի ծրագրի ծրագրի Յօդուածը, որ վերաբերում է Համագոյային եկեղեցական ժողովին, որ ազգային եկե-

ղեցական խնդիրներում միակ կանոնադիր մարմինն է և  
ընտրում է Ազգի Ներկայացուցիչ՝ Ամենայն Հայոց Հայ-  
րապետին՝ ժողովի կողմից ընդունուեց անփոփոխ:

Ժողովը փակուեց երեկոյեան ժամը 12. ին:

Ա.Բ.Ա.ՆԱԳԻՐԻԹԻՒՆ Ժ.Գ. ՆԵՍԻ.

1917 թ. յունիսի 23-ին կայացաւ Հոգեորականաց նա-  
խապատրաստական համագումարի ժամանակամբ նիստը, առենապե-  
տութեամբ Տ. Գէորգ Եպիսկոպոսի, քարդուղարութեամբ  
Լևոն վարդապետի, Գր. ք. Նոր-Արեւանի և Յար. ք. Տէր-  
ենօքեանի և մասնակցութեամբ 40 ժողովականների:

Նախ կարդացուեցաւ Ժ. ԺԱ. և Ժ. Աստերի արձա-  
նագրութիւնները, Ժ. Րդ և Ժ. Բ Աստերի արձանագրութիւն-  
ների մասին մի քանի ժողովականների կողմից զիտողու-  
թիւններ եղաւ, որ ճշտութեամբ չեն արձանագրուած իո-  
սողների մտքերը և ընդհանրապէս ունեն թերութիւններ: Առաջարկուեցաւ կամ նորից խմբագրել այդ երկու ար-  
ձանագրութիւնները և կամ համաստել՝ դնելով հարցերը  
և պատասխան-որոշումները:

Նատի օրակարգն էր ընտրութիւն յանձնաժողովների.

Տէր առենապետը նախ բացադրեց, որ համագումարը  
որոշումներ է կայացընել լուրջ և ուսումնասիրութեան կա-  
րուու մի քանի խնդիրներ մշակելու համար կազմել առան-  
ձին յանձնաժողովներ 1) Ազգային-Սահմանադիր ժողովի  
կանոններ մշակելու 2) Կալուածական և վարչական խըն-  
դիրներ քննելու, 3) Ծիսակատարութեանց կրծատումներ  
և փոփոխութիւններ մացնելու 4) Քահանայական ոռնկի  
խնդիրը ուսումնասիրելու 5) Քահանայական կանոնադրու-  
թիւն կազմելու 6) Թեմերի բաժանումը ուսումնասիրելու:

Այս խնդիրների շուրջը տեղի ունեցան կարծիքների  
ընդարձակ փոխանակութիւններ, որի ժամանակ արտա-  
յայտուեցան Տ. Մեսրովը Եպիսկոպոս Տ. Բագրատ եպ.

Տ. Խորէն եպ. Արսէն վ. Ղուչեան, Եղիշէ ք. Գեղամ. Աայք.

Տ. Մեսրովը Եպիսկոպոս առաջարկեց բոլոր խնդիրների  
համար ծրագրուած յանձնաժողովները միացնել և կազմել  
մի մարմին: Նրա պատճառաբանութիւնն էր, որ մարմինը

նարաւորութիւն կունենայ իրար հետ սերտ կապ ունեցող  
բոլոր խնդիրների մէջ ծրագրային և սկզբունքային միու-  
թեամբ որոշումներ կայացնել, այլ և նրա համար, որ շատ  
անձինք չկան, որպէս զի մի քանի մասնաժողովներ կազ-  
մուեն, Տ. Բագրատ եպ. պնդում էր, որ Սահմանադիր  
ժողովի կանոններ մշակելու և կալուածական-իրաւական  
խնդիրները որոշերու, նրա անցեալի հետ ծանօթանալու և  
հարկաւոր գրութիւնը պատրաստելու Պետական Օրէնսդրա-  
կան մարմնին ներկայացնելու համար կազմել մասնագէտ  
իրաւաբանների մի յանձնաժողով՝ մասնակցութեամբ ձեռն-  
հաս հոգեորականների: Իսկ միւս խնդիրների շուրջը առաջ-  
նորդների հրաւիրանքով խորհրդակցութիւններ կազմուեն  
թեմերում:

Առաջարկութիւն եղաւ մասնաժողովը կազմել և էջ-  
մածնում միաբաններից, քահանաներից և աշխարհական  
ներկայացուցիչներից, որոնք ստանալով առանձին վարձա-  
գրութիւն մշակեն բոլոր խնդիրները: Վարձատրութեան  
սկզբունքը ընդունելով հանդերձ, ի նկատի ունենալով որ  
գոիծի համար օգտակար անձինք, որոնք մինչեւ այժմ պա-  
րագել են Հայոց եկեղեցական խնդիրներով և ունին հար-  
կաւոր հմտութիւն, հաղիւ թէ համաձայնուեն վարձադրու-  
թեամբ գործ կատարել, այդ խնդիրը թողնուեց առկաիւ-  
Առաջարկում է նաև, որ Վեհափառ Կաթողիկոսի առա-  
ջարկութեամբ թեմերում կազմուեն խորհրդակցական ժո-  
ղովներ՝ համագումարի որոշումները մշակելու և քննութեան  
առելու համար: Այլ և առաջարկուեց, որ բոլոր թեմակալ  
առաջնորդները համարուեն յանձնաժողովի անդամներ և  
ըստ յարմարութեան հրաւիրուեն մասնակցելու խորհրդակ-  
ցութիւններին: Առօսուեց ա. առաջարկութեամբ Վեհափառ  
կաթողիկոսի թեմերում կազմուեն խորհրդակցութիւններ  
քննելու և մշակելու հետեւալ խնդիրները 1) Քահանայա-  
կան ոռնկի խնդիրը, 2) Քահանայական կանոնադրութիւն  
3) Ծէսերի կրծատում: Այս խորհրդակցութիւնների վերջ-  
նական եղբակացութիւններն վերապահուում են էջմիածնի  
մայուն յանձնաժողովի հայեցողութեանը: բ. 1) Ազգային  
Սահմանադրութեան կանոններ մշակելու 2) Կալուածական

խնդիրները քննելու 3) Թեմերի բաժանումը ուսումնասիւրելու համար էջմիածնում կազմւում է վեց հոգուց բաղկացած մի մնայուն յանձնաժողով էջմիածնի միաբաններից և քահանաներից, անդամներին ընտրելով գաղտնի քուէարկութեամբ։ Առաջնորդներին համարել անդամ յանձնաժողովի։ Յանձնաժողովին իրաւունք վերապահել հրաւիրելու վեհ։ Կաթողիկոսի հաճութեամբ գիտակ անձանց խորհրդակցելու համար։ գ. Որպէս զի մնայուն յանձնաժողովի աշխատանքները արդիւնաւոր հետևանք ունենան, այժմէն իսկ իրանց խորհրդակցութիւններին մատնակցելու համար հրաւիրեն երևանից հետևեալ գիտակ անձանց—պ. պ. Գր. Տ. Խաչարեանին, Պետրոսեանին, Գարեգին Ենգիլբարեանին, Լևոն Մուշեղեանին և Վասիլ Եղիազարեանին։

Սպա ժողովը անցաւ յանձնաժողովի հոգեոր անդամների ընտրութեան։ Առաջարկուեցան հետևեալ թեկնածուները Տ. Գէորգ Եպիս. Տ. Խորէն Եպ. Տ. Մատթէոս Եպ. Կորիւն վարդ. Արսէն վարդ. Յակովը քահ. Խաչվանքեան։ Թերթիկներով ընտրուեցին հետևեալ անձինք՝ Տ. Խորէն Եպ. 37 ձայն, Տ. Գէորգ Եպ. 27 ձայն, Տ. Մատթէոս Եպ. 26 ձայն, Արսէն վարդ. 38 ձայն, Յակովը քահ. Խաչվանքեան 32 ձայն, Կորիւն վարդ. 25 ձայն։ Օրակարդի հարցը սպառուելոց յետոյ՝ ժողովի ատենապետ Տ. Գէորգ Եպ. դառնալով ժողովականներին ատենապետութեան կողմից խօսեց հետևեալը. «Այսօր համագումարը՝ տւարտելով իր աշխատանքները, պիտի փակուի. սակայն փակումից առաջ պարտք եմ համարում Դիւանիս կողմից յայանել համագումարի անդամներին շնորհակալութիւն՝ նոցա տակտի և ցոյց տուածլուրջ ու խոհեմ վերաբերմունքի համար դէպի առաջադրուած խնդիրները, որով պահպանուեցաւ համագումարի վեհութիւնը, որ լիովին համապատասխան էր թէ լուծուելքը խնդիրների լրջութեան և թէ մեր հոգեոր կոչման։ Դիւանս ի նկատի առնելով համագումարի ջերմ վերաբերմունքը դէպի եկեղեցու և եկեղեցականների վերակենդանացման խնդիրը և անկեղծ ոգերութիւնը եկեղեցու գաղափարով, հաւատում է, որ հայ եկեղեցին կենսունակութիւն ունի ներկայումս վերածնուելու և խաղալու հայ

կեանքի մէջ մեծ բարոյական և կուլտուրական գեր, որպիսին նա խաղացել է անցեալում։ Չնայելով այն հանգամանքին, որ համագումարը շտապ է գումարուած, որով կարևոր նախապատրաստական աշխատանքներ կատարելու հնարաւորութիւն չէ եղած. սակայն և այնպէս զիւանս համոզուած է, որ այս համագումարը անփոխարինելի ծառայութիւն մատոյց հոգեոր դասին։ առիթ տալով նրան փոխադաբար շփուելու միմեանց հետ գաղափարական հողի վրայ, որով շատ թիւրիմացութիւններ վերացան և կարևոր խնդիրներ պարզուեցան, այլ և հաւատ ու յոյս ներշնչեց բոլորիս ընդհանուր գործի և նրա ապագայ յաղողութեան լուծման առթիւ։

Ի վերջոյ Դիւանս, ի նկատի առնելով նորին Վեհափառութեան հաւաստիացումները, հաւատում է, որ այս համագումարը կունենայ նաև իւր զործնական նշանակութիւնը և կստանայ մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ պատմական խոշոր նշանակութիւն։

Դիւանս հրաժեշտի ողջոյն տալով՝ յաջողութիւն է ցանկանում բոլորիդ յոյս տածելով, որ այս համագումարը կլինի առաջինը պարբերաբար գումարուելիք ապագայ համագումարների, որոնց կազմակերպութեան յաջողութեան համար պիտի աշխատենք բոլորս»։

Տէր Մեսրովը եկիսկոպոս ժողովականների կողմից խնդրում է թոյլ տալ վերջին խօսքը ասելու ժողովի փակումից առաջ, «Երկար դարերից յետոյ սա առաջի անգամն է որ ս. Էջմիածնի համարեա ամբողջ միաբանութիւնը՝ Ռուստուանում ապրող և քահանայական դասի ներկայացուցչութիւնը հաւաքուած և միասին խորհրդագելով որոշումներ կայացրին եկեղեցու և իրենց աներաժեշտ կարիքներին և եկեղեցու բարեգարգութեան խնդիրների շուրջը. ժողովի կազմը այնքան էլ լրիւ չէր և ոչ էլ ցանկալի կերպով կազմակերպուած. սակայն կատարուած աշխատութիւնը ապացոյց է, որ անհրաժեշտ է այս ժողովի գումարումը».

Թէև Էջմիածնի միաբան, բայց դրսից եկած, իրաւունք եմ համարում բոլոր քահանաներին առաջարկել, որ

միասին մեր որդիական չնորհակալութիւնը յայտնենք  
միաբանութեան գլուխ ազգիս Վեհափառ Հայրապետին,  
նաև մեր չնորհակալութիւնը յայտնենք վանքի միաբանու-  
թեան նրա մեղ ցոյց տուած հիւրասիրութեան համար:  
Չնորհակալութեան խօսք եմ ուղղում նաև ժողովիս նա-  
խագանութեանը, որ կանոնաւոր կերպով վարելով նստերը՝  
կարողացաւ մեղ հասցնել այն արդիւնքներին, որ արտա-  
յայտուած են մեր որոշումներով:

Ինչպէս ժողովի սկիզբը ես յայտնեցի, այժմ էլ գլու-  
նում եմ որ առաջադրած հարցերի քննութիւնները ինձ  
հետաքրքրերել են և այդ հարցերի համար ես արտայայ-  
տուել եմ միայն գործի օգտին և լաւագոյն կերպով վճռելու  
տեսակէտից: Այսպիսի մի լուրջ ժողովում, որ հէ ուրիշ  
շարժառիթ ինձ ղեկավարել չէր կարող: Չնորհաւորում եմ  
ժողովի լաւագոյն վախճանով և ի սրտէ բարեմաղթում,  
որ ժողովի որոշումները հնարաւոր չափով շուտով իրակա-  
նանան և որ այսուհետեւ ևս մեղ հնարաւորութիւն տրուի  
կազմել ժողովներ և խորհրդակցութեամբ որոշել մեր եկե-  
ղեցու բարենորոգութեան ամենաական հարցեր»: Ապա  
Տ. Խորեն եպիսկ. ջերմ խօսքերով ընդդեց, որ այս փոխ-  
յարաբերութիւնը, որը գոյութիւն ուներ ցայժմ կուսակրօն և  
աշխարհիկ հոգևորականների մէջ՝ մի կողմից իբրև իշխանուր-  
ների, միւս կողմից իբրև ստորագրեալների, որի հետեւանք  
էր կասկածով վերաբերմունք դէպի միմեանց: Այսօր այդ  
հին յարաբերութիւնը վնրջանում է, այսօր իբրև հաւասար  
եղբայրներ, իբրև հայ եկեղեցւոյ հարազատ զաւակներ և  
հաւատիմ սպասաւորներ ձեռք են մելիսում միմեանց  
միասին գործելու, միասին աշխատելու յօղուտ ազգի և  
եկեղեցւոյ: Տէր Խորեն եպ.-ի այս բարեացակամ արտայայ-  
տութեան համար քահանայութեան կողմից չնորհակալու-  
թեան խօսք արտասանեց Մեսրովը ա. ք. Մելեան:

Ապա ժողովի առենապետ Տ. Գէորգ եպ, համագու-  
մարի ժողովները յայտաբարեց վակուած: Ժողովը վակուած  
կէսօրուայ ժամը 12-ին:

Առենապետ՝ Գէորգ Եպիսկոպոս

Քարտուղար՝ Գր. Ի. Խորենեան



«Ազգային գրադարան



NL0172833

